

Հավելված

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
07.06.2017թ. թիվ 148-Լ որոշման



ԵՐԻՏԱՍԱՐԴ ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (Նոր խմբագրությամբ)

ԳԼՈՒԽ 1. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն ծրագրի հիմնական նպատակն է աջակցել երիտասարդ փաստաբաններին մասնագիտական ոլորտում արագ ինտեգրվելու հարցում: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը երիտասարդ փաստաբաններին տրամադրում է աշխատասենյակ, որը կարող է օգտագործվել միայն փաստաբանական գործունեություն իրականացնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 2. ԾՐԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Ծրագրում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.
 - 1) **Պալատ**- Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ.
 - 2) **Աշխատասենյակ**- ք. Երևան, Զաքյան 2, 2-րդ հարկ, թիվ 9 սենյակ.
 - 3) **Երիտասարդ փաստաբան** - սույն ծրագրի իմաստով երիտասարդ փաստաբան է համարվում այն փաստաբանը, որի արտոնագրի գործողությունը կասեցված չէ և Ծրագրի մասնակից փաստաբանների ընտրությունը կատարելու օրվա դրությամբ՝
 - ա) ունի ոչ ավել քան երեք տարվա փաստաբանական ստաժ անկախ տարիքից.
 - բ) մինչև երեսուն տարեկան փաստաբանը, անկախ փաստաբանական ստաժից:
 - 4) **Ծրագրի մասնակից փաստաբան** - Աշխատասենյակում փաստաբանական գործունեություն իրականացնելու հնարավորություն ստացած փաստաբան.
 - 5) **Հավակնորդ** - Ծրագրին մասնակցելու՝ Աշխատասենյակից օգտվելու համար հայտ ներկայացրած փաստաբան.
 - 6) **Հանրային պաշտպանի գրասենյակ**- Պալատի հանրային պաշտպանի գրասենյակ.
 - 7) **Երիտասարդական խորհուրդ** - ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդ.

8) **Կիսամյակ** - սույն ծրագրի իմաստով կիսամյակ է համարվում՝ տվյալ տարվա հունվար-հունիս կամ հուլիս-դեկտեմբեր ամիսների ժամանակահատվածը:

ԳԼՈՒԽ 3. ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3. Աշխատասենյակից օգտվելու հայտ կարող է ներկայացնել այն երիտասարդ փաստաբանը, որը՝

- որևէ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ չի գտնվում, բացառությամբ գիտական և/կամ մանկավարժական բնագավառում ծագած աշխատանքային հարաբերությունների,

- չունի աշխատասենյակ,
- համաձայնվել է սույն Ծրագրի պայմաններին, և
- բավարարում է Ծրագրի պայմաններին:

4. Աշխատասենյակը նախատեսված է 20 (քսան) Ծրագրի մասնակից փաստաբանի լիարժեք օգտագործման համար: Երիտասարդական խորհրդի որոշման հիման վրա Աշխատասենյակը կարող է տրամադրվել 20-ից ավել Ծրագրի մասնակից փաստաբանի՝ Երիտասարդական խորհրդի սահմանած դեպքերում և կարգով:

5. Ծրագրի մասնակից յուրաքանչյուր փաստաբան, բացառությամբ սույն կարգի 6-րդ կետում նախատեսված դեպքի, իրավունք է ստանում Աշխատասենյակից օգտվել մեկ Կիսամյակ ժամկետով:

6. Այն դեպքում, երբ Երիտասարդական խորհրդի սահմանած ժամկետում ներկայացված հայտերի քանակը պակաս է սույն կարգի 4-րդ մասով նախատեսված տեղերի քանակից, Երիտասարդական խորհուրդն Աշխատասենյակը կարող է տրամադրել այլ (սույն կարգի իմաստով երիտասարդ փաստաբան չհամարվող) կամ նախկինում Աշխատասենյակից օգտվելու հնարավորություն ստացած փաստաբանների: Սույն կետով նախատեսված փաստաբաններին Աշխատասենյակը տրամադրվում է սույն Ծրագրով սահմանված պայմաններով:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

7. Աշխատասենյակից օգտվելու համար հայտերն ընդունվում են տարեկան երկու անգամ՝ հունիս և դեկտեմբեր ամիսներին:

8. Աշխատասենյակից օգտվելու համար հայտեր ընդունելու մասին Երիտասարդական խորհուրդն ընդունում է որոշում, որի մեջ նշվում է հայտերի ընդունման ժամկետը և հարցազրույցի անցկացման օրը: Հայտերի ներկայացման և քննարկման ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Պալատի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ www.advocates.am, հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն հինգ օր առաջ:

9. Աշխատասենյակից օգտվելու համար հայտեր ներկայացնելու ժամկետը պետք է լինի առնվազն 3 (երեք) օր:

10. Հայտերն ընդունվում են Երիտասարդական խորհրդի կողմից Երիտասարդական խորհրդի սահմանած ժամկետում՝ աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ն:

11. Ծրագրին մասնակցելու համար ներկայացվող հայտի ձևը հաստատում է Երիտասարդական խորհուրդը:

12. Ծրագրին մասնակցելու համար ներկայացվող հայտը պետք է պարունակի՝

1) փաստաբանի անունը, ազգանունը, հայրանունը, էլեկտրոնային փոստի հասցեն, արտոնագրի համարը, տրման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, նախկին աշխատանքային գործունեության իրականացման վերաբերյալ տեղեկություն (ընդ որում պետք է նշվի ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական աշխատանքային գործունեության մասին),

2) մասնագիտական ուղղվածությունը (քրեաիրավական կամ քաղաքացիա/վարչաիրավական),

3) Գիտական և (կամ) մանկավարժական բնագավառում աշխատանքային գործունեություն իրականացնելու դեպքում՝ գործատու(ներ)ի վերաբերյալ տեղեկություն, մասնավորապես՝ գործատու(ներ)ի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), աշխատաժամանակի տևողությունը,

4) որևէ (նախորդ ենթակետից տարբերվող) գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ չգտնվելու, ինչպես նաև աշխատասենյակ չունենալու մասին նշում,

5) Ծրագրին պայմաններին համաձայնվելու մասին նշում,

6) փաստաբանի ստորագրությունը:

13. Երիտասարդական խորհուրդն եռօրյա ժամկետում ուսումնասիրում է Հավակնորդների ներկայացված հայտերը և սույն կարգի 3-րդ կետի պահանջներին համապատասխանող փաստաբաններին հրավիրում է հարցազրույցի: Եթե Հավակնորդների հայտերի քանակը պակաս է սույն կարգի 4-րդ մասով նախատեսված տեղերի քանակից, Երիտասարդական խորհուրդը հարցազրույցի է հրավիրում նաև մյուս Հավակնորդներին, հակառակ դեպքում սույն կարգի 3-րդ կետի պահանջներին չհամապատասխանող Հավակնորդին Երիտասարդական խորհրդի նախագահը կամ նրա առաջարկով խորհրդի այլ անդամը տեղեկացնում է նրա հայտն ընդունելու հիմքերի (հնարավորության) բացակայության մասին՝ գրությամբ նշելով հայտը չընդունելու պատճառները:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Հավակնորդների հետ հարցազրույց անցկացնելուց հետո Երիտասարդական խորհուրդը կայացնում է որոշում Աշխատասենյակից օգտվելու հնարավորություն ստացած (Ծրագրի մասնակից) փաստաբանների ցուցակը հաստատելու մասին: Ցուցակում չընդգրկված Հավակնորդի հայտ համարվում է մերժված:

15. Աշխատասենյակից օգտվելու հնարավորություն ստացող փաստաբանների ընտրությունը կատարվում է Երիտասարդական խորհրդի կողմից ներկայացված հայտերի և հարցազրույցի հիման վրա՝ առաջնահերթություն տալով ավելի ուշ արտոնագիր ստացած փաստաբաններին: Ծրագրի մասնակից փաստաբանի ընտրությունը կատարելիս Երիտասարդական խորհուրդը հաշվի է առնում սույն կարգի 4-րդ մասով նախատեսված տեղերի քանակը, Հավակնորդի աշխատանքային ստաժը, նախկինում մասնագիտական աշխատանքային գործունեություն իրականացնելը, գիտական և/կամ մանկավարժական գործունեություն իրականացնելու հանգամանքը, ինչպես նաև ընտրության արդարությունը և համաչափությունն ապահովելու համար էական այլ հանգամանքներ:

16. Երիտասարդական խորհուրդը Հավակնորդի հետ հարցազրույց կարող է չանցկացնել, եթե նախկինում նույն նպատակով արդեն իսկ անցկացվել է հարցազրույց և Հավակնորդը ստացել է Ծրագրից օգտվելու հնարավորություն:

17. Ծրագրի մասնակից փաստաբանի ընտրությունը կատարվում է ըստ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) և քրեաիրավական մասնագիտացման՝ որպես կանոն հավասար թվաքանակով:

18. Հարցազրույցի հրավիրված, սակայն չներկայացած Հավակնորդի հայտը համարվում է մերժված:

19. Այն դեպքում, երբ հայտարարված ժամկետում ներկայացված բավարարված հայտերի քանակը պակաս է սույն կարգի 4-րդ մասով նախատեսված տեղերի քանակից, ապա երիտասարդական խորհուրդը կարող է հետագայում համալրել քանակը:

ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

20. Աշխատասենյակն ապահովված է՝

- 20 (քսան) հատ աշխատասեղանով.
- 20 (քսան) հատ պահարանով.
- 20 (քսան) հատ դյուրակիր համակարգչով.
- առնվազն 2 (երկու) բազմաֆունկցիոնալ տպիչ սարքով (տպիչ, պատկերամուտ

և պատճենահանող սարք):

21. Աշխատասենյակի տեխնիկական սպասարկումը (բացի բջջային և միջազգային հեռախոսակապից), այդ թվում՝ մաքրության, կոմունալ ծառայությունների և ինտերնետ կապի ապահովումն իրականացնում է Պալատը:

22. Աշխատասենյակից կարելի է օգտվել երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ օրը՝ ժամը 10.00-ից մինչև 18.00-ը: Ոչ աշխատանքային օրերին, կամ ժամը 18.00-ից հետո Աշխատասենյակից կարելի է օգտվել բացառիկ դեպքերում, Պալատի նախագահի տեղակալի թույլտվությամբ:

23. Ծրագրի մասնակից փաստաբանն իր վստահորդներին կարող է ընդունել այդ նպատակով հատկացված ընդհանուր տարածքում:

24. Աշխատասենյակում չի թույլատրվում ծխել և օգտագործել ոգելից խմիչքներ:

25. Ծրագրի մասնակից փաստաբանը պարտավոր է՝

1) շաբաթական նվազագույնը 3 անգամ այցելել աշխատասենյակ,
2) սույն կարգի 7-րդ գլխով նախատեսված կարգով պատշաճ և բարեխղճորեն տրամադրել կամավոր անհատույց իրավաբանական օգնություն,

3) չփչացնել, չվնասել աշխատասենյակի գույքը և բարեխղճորեն օգտագործել այն,

4) աշխատանքային օրվա ընթացքում ժամանակավորապես բացակայելիս և աշխատանքային օրվա վերջում աշխատավայրից դուրս գալիս անջատել լուսավորությունը և էլեկտրական սարքերը, փակել պատուհանները, կողպել դռները և բանալին հանձնել Պալատի անվտանգության աշխատակցին:

26. Ծրագրի մասնակից փաստաբանն պարտավոր է Աշխատասենյակն օգտագործել սույն կարգի և Պալատի ներքին իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան:

27. Աշխատասենյակի օգտագործման հետ կապված խնդիրները, այդ թվում՝ Ծրագրի մասնակից փաստաբանների միջև Աշխատասենյակից օգտվելու հետ կապված վեճերը և Աշխատասենյակից օգտվելու իրավունքը դադարեցնելու հարցը լուծում է Երիտասարդական խորհուրդը:

ԳԼՈՒԽ 7. ԿԱՄԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

28. Ծրագրի մասնակից յուրաքանչյուր փաստաբան պարտավորվում է Աշխատասենյակից օգտվելու հնարավորություն ստացած փաստաբանների ցուցակում ընդգրկվելուց հետո 10-օրյա ժամկետում դիմել և ընդգրկվել կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով հանրային պաշտպանի գրասենյակ դիմած անձանց ցուցակում և Աշխատասենյակն օգտագործելու ժամկահատվածում Պալատի խորհրդի սահմանած կարգով և Երիտասարդական խորհրդի սահմանած նվազագույն քանակով (չափանիշներով) կամավոր անհատույց իրավաբանական իրավաբանական օգնություն տրամադրել հանրային պաշտպանի գրասենյակի շահառուներին:

29. Ծրագրի մասնակից փաստաբանների համար Երիտասարդական խորհրդի կողմից սահմանվող՝ կամավոր անհատույց իրավաբանական օգնություն ցուցաբերելու նվազագույն քանակը (չափանիշները) չի կարող նվազ լինել Պալատի խորհրդի սահմանած՝ կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման տարեկան խրախուսելի նվազագույն քանակից (չափանիշից) և չի կարող գերազանցել Ծրագրի մասնակից փաստաբանի աշխատաժամանակի **20 (քսան) տոկոսը**: Սույն կետի իմաստով Ծրագրի մասնակից փաստաբանի աշխատաժամանակ է համարվում կիսամյակի ընթացքում Ծրագրի մասնակից փաստաբանին տրված Աշխատասենյակն օգտագործելու հնարավորության ժամանակահատվածը՝ անկախ այն փաստացի օգտագործելու հանգամանքից:

30. Ծրագրի մասնակից փաստաբանների համար Երիտասարդական խորհրդի կողմից սահմանվող՝ կամավոր անհատույց իրավաբանական օգնություն ցուցաբերելու նվազագույն քանակը (չափանիշները) Երիտասարդական խորհուրդը սահմանում է ըստ մասնագիտական ուղղվածության (քրեաիրավական, քաղաքացիաիրավական/վարչաիրավական)՝ հաշվի առնելով հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կամ տեղակալի գրավոր առաջարկությունը:

31. Սույն կարգի 28-րդ կետում նշված իրավաբանական օգնությունն ապահովելու նպատակով Ծրագրի մասնակից փաստաբանի և Պալատի միջև կարող է կնքվել պայմանագիր:

32. Ծրագրի մասնակից փաստաբանին կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման համար անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներն ապահովում է Պալատը:

33. Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման հետ կապված ճանապարհային ծախսը ենթակա չէ հատուցման Պալատի կողմից:

34. Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրող Ծրագրի մասնակից փաստաբանը պարտավոր է կատարել Պալատի խորհրդի սահմանած՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կազմակերպելու մասին կարգով և Պալատի ներքին իրավական այլ ակտերով սահմանված պահանջները:

**ԳԼՈՒԽ 8. ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ
ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ**

35. Ծրագրով սահմանված պահանջների խախտման, պարտականությունների չկատարման դեպքում Երիտասարդական խորհուրդը դադարեցնում է Ծրագրի մասնակից փաստաբանի՝ Աշխատասենյակից օգտվելու իրավունքը և նրան հանում է Աշխատասենյակից օգտվելու հնարավորություն ստացած փաստաբանների ցուցակից:

36. Ծրագրի մասնակից փաստաբանի՝ Աշխատասենյակից օգտվելու իրավունքը դադարեցվում է և նա հանվում է Աշխատասենյակից օգտվելու հնարավորություն ստացած փաստաբանների ցուցակից նաև այն դեպքում, երբ Երիտասարդական խորհուրդը պարզում է, որ նրա կողմից Աշխատասենյակից օգտվելու հայտում ներկայացվել են իրականությանը չհամապատասխանող տվյալներ:

37. Ծրագրի մասնակից փաստաբանի՝ Աշխատասենյակից օգտվելու իրավունքը դադարեցվում է և նա հանվում է Աշխատասենյակից օգտվելու հնարավորություն ստացած փաստաբանների ցուցակից Երիտասարդական խորհրդի որոշմամբ:

38. Ծրագրի մասնակից փաստաբանի իրավունքը դադարեցվելու դեպքում Երիտասարդական խորհուրդը այդ իրավունքը կարող է տրամադրել (ցուցակում ընդգրկել) տվյալ կիսամյակի համար հայտ ներկայացրած այլ փաստաբանի՝ ղեկավարվելով Ծրագրի 5-րդ գլխով սահմանված չափանիշներով:

ԳԼՈՒԽ 9. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

39. Սույն ծրագրի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացում է Պալատի նախագահի տեղակալը: Երիտասարդական խորհրդի կողմից սույն ծրագրի հետ կապված անհրաժեշտ որոշումները քվորումի բացակայության կամ այլ պատճառով չընդունվելու դեպքում այդ որոշումներն ընդունում է Պալատի նախագահի տեղակալը:

40. Ծրագրի մասնակից փաստաբանները պարտավորվում են պահպանել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 22.09.2014թ. թիվ 152-Լ հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի շենքի էլեկտրակայանքների շահագործման և անվտանգության կանոնները, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի շենքում գտնվող համակարգիչներից օգտվող անձանց աշխատանքի կազմակերպման, շահագործման և անվտանգության ապահովման կանոնները, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի շենքում գտնվող զուգարանների շահագործման սանիտարական և հիգիենիկ կանոնները, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի շենքում հրդեհային անվտանգության կանոնները:

41. Աշխատասենյակն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել նաև Պալատի կարիքների համար՝ ոչ ավել քան վեց օր մեկ կիսամյակի ընթացքում:»:

* * *